

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**Սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի 15.03.2019թ. թիվ 155 նիստի**

**Օրակարգ.**

1. Հեռակա ասպիրանտ Անրիետա Արայիկի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատում
2. ԵՊՀ-ի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկում և բարեփոխումներին միտված առաջարկությունների ներկայացում
3. ԵՊՀ 100-ամյակին նվիրված ֆակուլտետային միջոցառումների ցանկի հաստատում
4. Ընթացիկ հարցեր

**Լսեցին 1.** Ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

**Ելույթ ունեցան.** Հ.Վերմիշյան, Ա. Մկրտիչյանը, Ա. Սահակյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Խաչատրյանը, Հ. Գևորգյանը:

**Որոշեցին.** Հեռակա ասպիրանտ Անրիետա Կարապետյանի ատենախոսության թեման հաստատել <<Հայաստանաբնակ երիտասարդների սպառողական վարքի սոցիոլոգիական վերլուծություն>>:

**Լսեցին 2.** ԵՊՀ-ի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկում և բարեփոխումներին միտված առաջարկությունների ներկայացում:

**Ելույթ ունեցան.** Ա. Մկրտիչյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը:

**Որոշեցին.** Ներկայացնել հետևյալ եզրակացությունն ու առաջարկությունները.

1. Երևանի պետական համալսարանը որպես բացառիկ ազգային արժեք և ոլորտի միջազգայնորեն ճանաչված առաջատար իր 100-ամյա պատմության ընթացքում երբևիցե չի եղել այս չափի տեղեկատվական հարձակումների թիրախ, ինչպես հիմա, իր հորեյանական տարում: ԵՊՀ-ն համակարգաստեղծ նշանակություն ունի հայաստանյան բարձրագույն կրթության դաշտի համար: Գիտակցելով դա՝

համալսարանականները ձգտում են ապահովել սեփական հողում միջազգային կրթական չափանիշներին համապատասխանող հայեցի բարձրագույն կրթություն ստանալու ՀՀ քաղաքացիների իրավունքը, որի իրականացման բնականոն ընթացքը վտանգված է վերջերս հայաստանյան ԶԼՄ-ներում ԵՊՀ-ն վարկաբեկող տարբեր պաշտոնյաների և անտեղյակ քաղաքացիների հայտարարությունների հետևանքով համալսարանի գործունեությանը հասված բարոյահոգեբանական մեծ վնասի պատճառով: Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը մտահոգված է ստեղծված իրավիճակով և կոչ է անում դադարեցնել բոլոր տեսակի մեղադրանքների հրապարակային շրջանառումը՝ ենթադրյալ ֆինանսական չարաշահումների խնդրի քննությունը վերապահելով ՀՀ դատական ատյաններին:

2. Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհուրդն առաջարկում է ԵՊՀ ղեկավարությանը սկսել կրթական և կազմակերպչական բարեփոխումների նոր փուլ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, վտանգ ենք տեսնում դասախոսների և գիտաշխատողների վարձատրությունը աշխատանքային ձևական ժամանակահատվածներով և ոչ թե անհատական ծանրաբեռնվածություններով սահմանված և փաստացի կատարված աշխատանքով պայմանավորելու փորձերի մեջ: Անհրաժեշտ ենք համարում ամբողջությամբ վերանայել փաստացի աշխատանքի գրառումների և ժամավճարի կատարողականի մասին տեղեկանքի ձևանմուշը: Դիմում ենք ԵՊՀ արհմիությանը՝ անմիջապես զբաղվել այս հարցով և պաշտպանել պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական ազատությունների իրավունքը:
3. Հետագա բարեփոխումների հաջող իրականացման գրավական են համարում ԵՊՀ ամբիոնների պաշտոնական կառուցվածքի /պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ/ սահմանումն ըստ բաժինների ուսանող թվի, այդ կառուցվածքի հետ հարաբերակցելով նաև ԵՊՀ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի թվաքանակը: Դա թույլ կտա խուսափել թ՛ե ֆինանսական /աշխատավարձ, լրավճար/, թ՛ե նյութական /լսարաններ, սենյակներ, կահավորանք և այլն/, թ՛ե այլ

բնույթի ներհամալսարանական ռեսուրսների անհավասար և լավ աշխատանքը չխթանող բաշխումից, գործառույթների կրկնությունից և ավելորդ օղակների անարդյունք գործունեությունից:

4. Հրատապ ենք համարում ԵՊՀ տարածքում ուսանողների վարքականոնների խստացումը, խախտումների դեպքերում իրենց հանդեպ հստակ և թափանցիկ սանկցավորման մեխանիզմների մշտական կիրառումը՝ ներառյալ համալսարանից հեռացումը:

**Լսեցին 3:** ԵՊՀ 100-ամյակին նվիրված ֆակուլտետային միջոցառումների ցանկի քննարկում և հաստատում:

**Ելույթ ունեցան.** Ա. Մկրտիչյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Աթանեսյանը:

**Որոշեցին:** Հաստատել ԵՊՀ 100-ամյակին նվիրված սոցիոլոգիայի ֆակուլտետի միջոցառումների հետևյալ ցանկը:

1. Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա գրքի շնորհանդես - 2019 թ. ապրիլ
2. Համալսարանական կրթությունը սոցիոլոգիայի հեռանկարում միջազգային գիտաժողով - 2019 թ. ապրիլի 26-27
3. ԵՊՀ իմիջի վերաբերյալ հետազոտության արդյունքների ներկայացում - 2019 թ. հունիս
4. Բիրմինգեմի և Զալցբուրգի համալսարանների հետ համատեղ գիտաժողով նվիրված միգրացիայի հիմնախնդիրներին – 2019թ. սեպտեմբեր
5. Գերմանիայի Կայզերսլաուտերնի համալսարանի հետ համատեղ աշխատաժողով - 2019 հոկտեմբեր
6. Սոցիալական աշխատողների համահանրապետական գիտաժողով – 2019 թ. նոյեմբեր  
Ֆակուլտետի 15-ամյակի միջոցառումներ – 2019 թ. նոյեմբեր

Նիստի նախագահող<sup>a</sup>

Ա. Ե. Մկրտիչյան

Քարտուղար՝

Ա. Վ. Աթանեսյան